

հին նուիրակի մը ամէնէն ներհուն աշակերտն ու 1700էն մինչեւ 1738 Պոլիսի ամէնէն բազմահմուտ և բազմասան վարժապետն¹ եղաւ՝ ձեռնկալութեամբ իր ժամանակակից ամիրաներուն և Գրասէր Յովհաննէս կորստ և անոր ձեռնասուն Յակոբ Նալեան պատրիարքներուն, հետդիտէ իբրև լեզուագէտ ու գրագէտ զպիր և թարգմանիչ՝ փայլեցաւ, խարբերոցի Ղուկաս լեզուագէտ վարժապետին հետ², 1750էն 1812՝ անխոնջ աշխատող Պալաթցի Տէր Յովհաննէսեան Գէորգ պատուելին,

1. Ըստ ծերունի Գաբրիէլ Պատկանեանի (ծաղկաքաղ կենսագրութիւն Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին, էջ 11-12) այս Պաղտասար դպիրը՝ չուով Յովհաննէսի մասե Մխիթար արքայի գրական հեղեղէն պահպանած էր ուղիղ հայիրէն լեզու, գրելով և տպելով շատ հեղինակութեամբ և սրբագրութեամբ հետ՝ մասե երեք հատոր աշխարհաբառ ու գրաբառ քերականութիւն, զոր, կրսէ Գ. Պատկանեան, ծայրէ ծայր իւրացուցած է Տ. Միքայէլ Չամչեան՝ առանց յիշելու իր պատմութեան մէջ գէթ ամունը Պաղտասար Ա. Գպիրին։ Այս վաղեմի դպիրին վարժարանին մէջ մախարակուցան՝ Միմէոն կաթողիկոս, Բասենցի Յարութիւն վարժապետ, իմաստասէր Պետրոս վարժապետ Բերդումեան, Թագուր վարժապետ (Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին վարժապետը), Աղամալեան, Ղարանցի, Բարսեղ Կեսարացի և Սահակ Բ. Գազին ըսուածը՝ որ հակառակորդն էր Չաքարիա պատրիարքին Պոլիսի։

2. Այս Ղուկաս վարժապետ լատինագէտը՝ շատ մշամաւոր է իբրև թարգմանիչ բազմավաստակունի թարգմանած 20 հատորի չափ իբր ամէն տեսակ մեկնութիւն Ս. Գրոց, որոնց մեծ մասը դեռ ձեռագիր կը մնայ Ազգ. մատենադարանի ստորմակողմ դարանին մէջ և մէկ մասն ալ տպուած է ի Ղեմետիկ և ի Պոլիս. Մխիթարեանցմէ ու Տէրոյնց պատուելիէն զատ՝ չիկայ այս ամօին չափ թուղթ սեցունող գրագէտ, որ կը գործէ եղեր ծախքովն ու յորդորելովն Յակոբ Նալեանի։